GRAD
EREN
390
BUHR

B 1,237,968

Digitized by Google

THE UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

1017

ՀԱՅԳՈՅԺ

ԱՇԽԱՐԱՆՔ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ

ԳՐԵՑ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՈՒԺԵՑ
ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՏՈՒԱՒ Ի ՄԱՄՈՒԼ
ՄՏԵՐՈՒՄ ՀԱՅՐԻՆԱԿՈՑՆ ՄԵՐ
ՊԱՐՈՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՃԵՄԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ
1877

Digitized by Google

Digitized by Google

ՀԱՅԳՈՅԺ

ԱՇԽԱՐԱՆՔ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ

ԳՐԵՑ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՈՒԺԵՑ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՏՈՒԱՒ Ի ՄԱՄՈՒԼ

ՄՏԵՐՈՒՄ ՀԱՅՐԵՆԱԿՑԻՑՆ ՄԵՐ

ՊԱՐՈՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՃԷՄԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

1877

THE UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Digitized by Google

GRAD
ERN
390
Bulw

Digitized by Google

Ա.Ռ ՈՂԲԱԿԻՑԴ ԻՄ

ՀՍՏՈՑ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Դու մինչ կայտառ ու ծաղկահատակ երիտասարդ ես՝ հրճուանք և ուրախութիւն կը սիրես, երդ և հարսանեաց պար կը սիրես, ո՜հ, ես զքեզ յաղթ և 'ի լաց կը հրաւիրեմ Հայոց աշխարհին վերայ։ Կը ճանաչեմ աղնիւ ոգիդ, որ թէ՛ 'ի խինդ և թէ՛ 'ի լաց միապէս զգայուն ես. այդ եւս մի նշանակ կը համարիմ ես՝ թէ ոգիդ կենդանի է, և դու Հայուն անզգայ զաւակ չես։ Հայոց աշխարհ կուլայ, ես և դու Բիւզանդիոնէն ինչպէս 'ի մօտայ կը լսենք նոցա կոծն ու կական, պէտք է լալակից ու վշտակից լինինք, զի նոյն հայրենեաց պանդուխտ որդիքներն եմք։

Գիտես դու և կը յիշես թէ անցեալ տարւոյն 'ի վերջ՝ ես զվան ՎԱՆԳՈՑԺով ողբացի, մինչ թագուցեալ կրակն միայն զվան վառեց. այդ կրակին հետ արիւն և այլ սոսկալի աղէտներ չկային, այլ միայն վանեցւոց կեանք և ստացուածք հուր ճարակելով մոխիր դարձուց։ Եւ ի՞նչ պէտք էր սուր և արիւն. միթէ ժողովուրդն իւր չքաւորութենէն ինքնին անարիւն և անսուր չի՞ չքանար։

Ցո՛ւշ բեր, վաստակաւոր գաւառի շինական ժողովրդոց յորդոր կը կարդայի, որ վանայ կրա-

Digitized by Google

Դ

կին վերայ ՀՈՒՐ լեցնեն, և օգնեն դժբաղդ Վանեցւոց. ես չէի գիտեր և չէի գուշակեր, որ Վանայ կրակէն յետոյ պիտի ելնէր ուրիշ պատուհասիչ Մարական կրակ մը, որ քան զԲաբելոնի բոցն ծաւալելով՝ բոլոր Վասպուրական աշխարհն՝ դժոխային հրով ծախէր, Հայոց գեղերն ու աւաններ քանդէր և աւերէր, Բագրեւանդայ գաւառի ժողովուրդ իսպառ կոտորէր, Հայոց աշխարհի վանքեր, եկեղեցիներ և ամեն նուիրական վայրեր պղծէր և ապականէր, Հայոց տնասէր կիներ, գեղաղէմ հարսներ և կոյսեր գազանային վայրագութեամբ լակէր, և շատն ելս յափշտակելով գերեվարէր, և այլ անլուր անօրինակ ոճիրներ գործէր և ահռելի աղէտներ բերէր Հայոց աշխարհին վերայ։

Վան այդորիկ ես արդ մոռցայ զՎան և ըզՎանգոցն. արդ կ'սկսիմ ՀԱՑԳՈՑԾՈՎ ողբալ մեր հայրենեաց համատարած աղէտներ, զորս վայրագ խուժերուն ձեռքէն կրեց Հայոց անտէր ժողովուրդ։ Ցաւ է ինձ որ բաւական չեղայ Վասպուրական աշխարհին, բարձր Հայոց, Բասենոյ, Բագրեւանդայ գաւառին և Մշոյ աշխարհին արդի վերահաս չարեաց հաղար բիւր աղէտներուն նկարագիրը բովանդակ հանել։ Միթէ հնա՞ր է, որ միայն հոգւով տեսնեմ կամ գուժատու լրերով չափեմ մեր հայրենեաց նորաքանդ աւերակներ։

Այլ ինչպէս ըղձակաթ կը լինէր Վահան Գողթնացին մինչ Բաբիլոնի գերութեան շղթայն կաշկանդել էր զինքն, նա կը գոչէր և կը պաղատէր

տաւ Ամիրապետն. «ԱՐՁԱԿԵՑԷ՛Ք ՈՐ ՏԵՍԱՆԵՄ ԶՈՐ-ԶԱՓՈՒԹԻՒՆ ԱՒԵՐԱԾՈՑՆ ԵՐԿՐԻՆ ԻՄՈՑ ՀԱՑՐԵՆԵԱՑ»։ Ո՛Հ, ես էլ նոյն ըղձով կը փափագիմ, որ միանգամ արձակվիմ այս պանդխտութեան շղթայէն, երթամ ոտքովս շրջիմ և աչքովս տեսնեմ մեր աւերած աշխարհ, և թէ լամ՝ թող արտասուքս այն կարմիր հողոյն վերայ կաթի, ուր կոտորուեցան Հայեր և ուր թափեցաւ անմեղ մանուկներուն և անբիծ կոյսերուն արիւնը։ Եւ դու ինձ հետ գոչէ, որ սիրահար ես հայրենի ազատութեան. Ո՛վ անպարտ զոհերու հրաշագործ արիւն, արդեօք Հայոց մեռեալ ու մոխրացեալ հողերուն նոր կենդանութիւն պիտի տա՞ս։

Զվարանինք սակայն և ողբերով չյուսահատինք. Երկնից դթութեան և ողորմութեան հոսանքներ անսպառ են. այն որ Երբեմն Բաբիլոնի դաշտին մէջ ցրուած անյոյս Ժողովուրդին ցամքած ոսկորներուն վերայ ցօղեց և իսկոյն գերեզմանի դաշտավայրը կենդանութեամբ կանաչացաւ, օր մի եւս Երկինք այդ կենդանարար ցօղ Հայոց դաշտերուն վերայ կը ցօղէ. դու կը տեսնես թէ ինչպէս Հայոց աշխարհն եւս կը վերածնի. հրաշիւք։ Միայն թէ մեք աննկուն արիութեամբ գործենք և Աստուած մեր օգնականն է։

Իսկ դու, ազնի՛ւ բարեկամ, իմ փոքրիկ երկոյս փոքրիկ Մեկենաս, դարձեալ ձեր անուան կը նուիրեմ ՀԱՑԳՈՑԺս որ Հայոց աշխարհի աշխարանքն է, ինչպէս արդէն նուիրեցի մի դուշնաքեայ երկս, որոյ վերտառութիւնն էր ԺԱՄԱՆԱԿ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴ ԻԻՐ։

Digitized by Google

Դու այժմիկ փութա՛ և տա՛ր ՀԱՅԳՈՅԺ տո՛ւր մամուլին. թող մամուլն եւս իւր ազատ թեւերով տանի տայ աշխարհին։

Ես գիտեմ, այն ազգ և աշխարհ որ Հայ չէ՝ մեզ հետ չի լար. այլ մեզ չէ պէտք օտարին լաց. բաւական է որ թէ՛ տարաշխարհիկ գաղթական Հայեր, և թէ՛ Բիւզանդիոնի պանդուխտ Հայեր յիշեն մեր հայրենեաց չարչարեալ որդիքներ և լան։

Ես գիտեմ և դու գիտես թէ սոսկ լալով ու ողբերով եթէ շաղախենք մեր հայրենեաց հող՝ հայրենիք չշինուիր։ Սորա համար թերեւս ոմանք որ չոր ու անզգայ սիրտ ունին, զիս մեղադրելով բամբասեն թէ Խրիմեանը մի լալկան մանուկ է դարձեր կամ թէ միշտ աւերակասէր բու։

Սակայն ես կը պատասխանեմ նոցա՝ որ այդպէս կը կարծեն. թող այդ ծեր իմաստուն և հանճարեղ շինողներ անլաց և անկոծ չինեն մեր հայրենիք, և կամ նորա լացող որդիքներուն արտասուքը ծիծաղով սրբեն։ Ես յայնժամ կը թողում գուժերս և ողբերս, կ՚սկսիմ միայն ուրախութեան երգ նուագել։

Ամեն աշխարհ և ժամանակ իւր ծիծաղ և լացն ունի. ո՞վ է այն՝ որ իւր հարսանիք խընդումով և պարերգութեամբ չկատարեր. ո՞վ է այն՝ որ իւր մեռեալը առանց կոծոյ և լալոյ կը թողէ։

Այժմիկ Հայոց աշխարհի կեանք և ժամանակ լաց է. Հայոց տունը՝ ազգ տուն է և իւր հանդէսը մեռելոց հանդէս է։ Պէտք է ուրեմն լանք

վիշտակցինք քանի որ մեր հայրենեաց որդիքներ կու լան. և նոքա որ կու լան՝ մեր հայրեր, մեր մայրեր, մեր եղբայրներ, մեր քոյրեր, մեր սիրելիներ և մեր բարեկամներն են։

Երանի՜ թէ ազատ շնչով, ազատ ձայնով և ազատ գրչով լայինք. ո՜հ, մանուկ քան զմեզ ազատ է և ազատաբար կու լայ. մեք հեզձամբղձուկ լինելով կու լանք. և դու գիտես որ մեր աշխարհին մէջ լացն եւս ազատութիւն չունի։

Լանք տոգա և բարձրաձայն աղաղակենք. թէ մեր լալոյ ձայնին աշխարհ խուլ լինի ու չլսէ, հաւատանք թէ երկինք անշուշտ կը լսէ. և Աստուած իւր բարերար ձեռքով կը սրբէ Հայոց աշխարհի լացն. արագ կը բերէ մեր փրկութեան և ազատութեան օր. և այն օրն է ահա, որ կը խայտան և կը ցնծան մեր հայրենեաց որդիքներ. յայնժամ մեք եւս Մովսիսի քրոջ Մարիամու թմբուկն մեր ձեռքն առնելով՝ հետ նոցա կ՝երգեմք և կը ասեմք. «Օրհնեսցուք զՏէր, զի փառաւոր է փառաւորեալ։»

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Digitized by Google

Տե՛ս, Տէր, զի նեղեալ եմ. ոսկերք իմ խռովեցան, սիրտ իմ գեալաւ յիս և ես գտայ դառնացեալ. արտաքուստ անժառանգեաց զիս սուր, որպէս և մահ 'ի ներքուստ։

Լուարո՛ւք, լուարո՛ւք զայս՝ զի ես հեծեմ, հառաչեմ և ոչ ոք է որ մխիթարէ զիս, . . . ո՛վ Տէր, դու արարեր զօրն զայն և դու կոչեցեր զժամանակն զայն, և եղեւ ինձ վա՛յ վա՛յ։

Զե՛զ ասեմ, ձե՛զ ասեմ, ո՛վ անցաւորք ճանապարհաց. դարձայք՝ հայեցարուք և տեսէք թէ իցե՞ն երբէք ցաւք ըստ ցաւոց լեալ՝ որք 'ի վերայ իմ հասին . . .։

ՈՒՔ ԵՐԵՄԻԱՅԻ Ա. ԳԼ.

Digitized by Google

ՀԱՅԳՈՅԺ

ԱՇԽԱՐԱՆՔ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ

ՈՂԲԱ՛Մ զքեզ, Հայո՛ց աշխարհ, զի քո կեանք ողբերգութիւն է. ամեն դար և ժամանակ երբ աղէտներ զքեզ պատեցին, դու միշտ աղէտներուդ հետ մի ողբերգու ծնար. քո առաջին ողբերգուն Մովսէս Խորենացին է, որ հազար երկերիւր ամ յառաջ ուժգին ողբաց զքեզ, մինչ վերացաւ գլխէդ Արշակունի թագ, մինչ ջախջախեցաւ իշխանութեանդ գաւազան, նսեմացաւ քո փառք, կորեաւ ազատութիւնդ, և դու տիրական բարձրութենէդ խոնարհելով իջեր ծառայական 'ի ստրկութիւն. դու որ քան զհիւսիսականս վեհագոյն կը դնէիր քո գահը։

Յայն օրէն անկար դու ուժգնապէս երբ խալամիտ նախարարք զԱրշակունի թագն դաւեցին, երբ Վեստ Սարգիս և մատնիչ Կիրակոս Անուոյ ազատ բանալին նենգութեամբ Յունական կայսրութեան յանձնեցին. այնուհետեւ թէեւ պահ մի գիշերալոյս աստղի նման.

Digitized by Google

հին թագդ Հայկազանց գերեզմանէն ծագեցաւ, յանկարծ աղօտապէս փայլեցաւ Ցաւրոսեան լերանց գագաթ, ո՛հ, այդ քո իրիկուան վերջալոյսն էր, որ Լուսինեան Լեւոնին հետ արեւուն պէս 'ի մայր մտաւ. յայն օրէն Հայոց աստղ ծածկեցաւ ստոյգ գերեզմանին մէջ և այլ եւս չծագեցաւ։

Ցայն օրէն վերջի թագին հետ մեռաւ քո ամեն յոյս և հայրենի ազատութիւն. յայն օրէն մինչեւ ցայսօր վեց դարեր անցան, դեռ ո՛չ լրացաւ քո ստրկութեան և տառապանաց ժամանակ, այլ տառապանք 'ի վերայ տառապանաց միշտ հասին 'ի վերայ քո. չտուին քեզ մի հանգիստ ժամանակ, որ պահ մի չուն՝ առնէիր և հանգչէիր մաշած ու թալկացած կեանքիդ մէջ։

Թողուք Ցոյն, Պարսիկ և Արաբացին. Լէնկթիմուր, Շահհապաս և այլ հիւսիսային բարբարոս ազգեր քանիցս անգամ արշաւեցին, քանդեցին, հողաբլուր դարձուցին ամուր ամուր քաղաքներդ, խրամատեցին բոլոր այգեցանկերդ, գքեզ ճռաքաղ արարին, կայտառ որդիքներդ մինչեւ 'ի Յուժաստան և Շահաստան գերի վարեցին։

Օրհնեա՛լ ես դու, Հայո՛ց աշխարհ. որչափ քանդող թշնամոյն ձեռք կը չանար գքեզ իսպառ ճռաքաղ առնել և որթերդ յարմատէն յօտել, դու անդրէն նոր նոր ուռեր տալով կը բողբոջէիր։ Հաւատա՛ դու, Հայո՛ց աշխարհ, թէ Աստուծոյ օրհնութիւնն էր որ միշտ անապական պահեց քո ճիւերդ. զի դու Քրիստոսի ճշմարիտ որթին վերայ հաստատուած ես։

Բայց դարձեալ ողբամ գքեզ, անտերո՛ւնչ ժողովուրդ Հայոց. զի քո մնացորդ ճիւեր անխնայ ճմլեց ժանտ և ժպիրհ Գիւրտ. սորա համար քո կեանք՝ թէ՛ առաջին և թէ՛ վերջին, միշտ ողբերգութեամբ լի է. Մովսէս չէ միայն որ գքեզ կ'ողբայ. Եղիշէն, Ղազարիկ, Լազարեանցին, Մեծոփեցին, Առաքել պատմագիր, այս ամեն

իրենց ժամանակին մէջ զքեզ ողբացին։ Ո՛հ, ես էլ քո ողբերգուն եմ. երանի՛ թէ յետինն լինէի, և այլ ևս չծնէր քեզ ողբերգու. այլ ևս անպահապան այդպիսի ճռաքաղ չլինէր. երթայր և այլ ևս չդառնայր անդրկին քո տառապանաց տարին և ժամանակ։

Բայց դարձաւ և բարկութեամբ դարձաւ, երբ Արևելեան քաղաքակրթութիւն Արևելքը կ'ողջունէր, երբ Թուրքաստան Սահմանադրութիւն կը հրատարակէր, երբ պանծացող տասնեւիններորդ դարը՝ գիտութիւն, լոյս, աղատութիւն և ազգաց իրաւունքներ կը քարոզէր, և երբ դու ինքնավար՝ Սահմանադրութիւն ունէիր, կը հրճուէիր յուսով նորաքայլ յառաջդիմութեանդ մէջ։

Իբրեւ սրաթեւ արծուի, իբրեւ ճախրաթեւ բազէ յանկարծ հասաւ ու դարձաւ քո վերայ տառապանացդ օր. սեւ օր, սեւ գիշեր էր այն. և իբրեւ ծննդական մոր՝ ցաւոց երկունք զքեզ ըմբռնեց. դու արդ կը հեծես և ճիչ կը բառնաս. յոյսդ՝ երկուանաց մէջ է. կամ կը ծնիս ողջամիտ 'ի նոր յազատութիւն, և կամ կը մեռնիս այդ մահացու վէրքերովդ. անէ՛ծք այն ձեռաց, որ քո հանդստարանի գերեզման կը կնքէ թէ այլ ևս ո՛չ զոյ Հայն ու Հայաստան։

Ի՞նչ անբախտ և թշուառ ես դու, մա՛յր, թէ մեռնիս այժմիկ. երբ ուրիշ մայրեր և ազգեր 'ի նոր կեանս կը վերածնին. քո կեանք՝ քառասուն դար է. Յունական կրակէն, Պարսկական կրակէն, Արաբացւոց կրակէն, Թաթարներու կրակէն ողջ անցար, անհուն անհամար զոհեր տուիր, որպէս զի մնացորդ որդիքներովդ ապրիս. և արդ ապիկար և վաստազգի Գիւրտին կրակով պիտի այրիս և սպառի՞ս։

Մինչ հիւսիս հարաւին դէմ 'ի մարտ կ'որոտար, Հայոց լեռներու հին աւազակներն 'ի զէն կը կոչուէին. այդ բանը՝ նոցա համար մի բախտ և պատեհ ժամ էր։

Digitized by Google

Նրքա որ սովորած էին առանց քրտանց վաստակի՝ գիւղական ժողովուրդին ճակատի քրտանց հացն ուտել, միշտ աւարով ու յափշտակութեամբ ապրիլ, իրաւունք համարեցին իրենց համար ամեն բռնութիւն, ամեն եղեռն և ոճիր 'ի գործ դնել քրիստոնեայ ժողովուրդին վերայ. և այնչափ անվախ ու անկասկած կը գործէին չարիքներ, որպէս թէ երկիրն անիշխան էր, ոչ իրաւունք կար, ոչ դատաւոր, ոչ դատաստան։

Մարախի ու թրթուրի նման թափեցան, Հայոց գիւղեր և դաշտեր ծածկեցին, մի խուն ժամանակի մէջ ամեն կանանչութիւն կերան ու չորցուցին, այն չէն չէն գեղեր և աւաններ անապատ դարձուցին։ Միթէ չգիտե՞նք 'ի սկզբանէ անտի որ այդ ազգին ձեռք միշտ քանդող է, երբէք չիներել չգիտէ. ես էլ չգիտեմ թէ ինչո՞ւ համար է որ երկրին իշխանութիւն այդ աշխարհաքանդ ձեռք կարճել չուզեր։

Եւ ո՞յք էին Քիւրտերու անկարգ հրոսակներուն վարիչ և առաջնորդ. — նոցա մոլեկրօն դեղապետներն էին, որոց ոգիներ 'ի բնէ անտի ոխութեամբ լցուած կը զայրանային Հայոց ժողովուրդին դէմ. մանաւանդ երբ կը լսէին և կը հաւատային իսկ թէ այս պատերազմ յանուն Քրիստոնէից ազատութեան կը մղէ հիւսիսային Պետութիւն։

Ես գիտեմ ու կը ճանաչեմ զՔիւրտն. գիտեմ թէ նա ինքնին ոչինչ գործ և զօրութիւն չունի. այդ անդէպ պատճառանքներ 'ի բաց թողունք։ Այո՛, դեղապետներու կրօնամոլութեան հուրը կը վառէր զիրենք. այլ ինչ հուր էր այն, որ 'ի ներքուստ զդեղապետներ կը վառէր։

Ո՜հ, մի՛ կրկտեր այդ հուրը, գրի՛չ իմ, գրի՛չ իմ. կը բորբոքի և զքեզ կ'այրէ. թող այրէ, թող այրէ, և ամիւնս երթայ խառնուի Հայոց այրած ժողովուրդի ամիւնին հետ։

Digitized by Google

Տէրութիւն զՔիւրտն 'ի զէն կը կոչէ. և ո՞վ իրաւունք ունի մեղադրել զինքն. զի Քիւրտն իւր դաւանակից ժողովուրդն է՝ առանց զրի և Գուրանի, և քան զՀայն բիւր անգամ յարգի։

Այլ մի՞թէ զինուոր անթոչակ կը զինուորի՞. Քիւրտին հացն ու թոչակ ի՞նչ էր զինուորող ձեռքէն. — ոչինչ. այլ միայն այս բան «Գնացէ՛ք և ձեր թոչակն ու հաց ձեր ձեռքով հոգացէք»։ Եւ ուստի՞. — Հայոց գեղերէն ու ժողովուրդէն։

Այս անարդար դատաստանին մէջ Քիւրտ կ'արդարանայ Աւետարանին և Գուրանին առաջ. և ես նմա իրաւունք կու տայի, եթէ Քիւրտն միայն իւր պէտքեր հոգար, հիւրաբար վարուէր, գիւղացւոց հացն ուտէր. թէ հեծեալ էր, ձիոյ դարման խնդրէր, ելնէր և ուղղակի 'ի բանակ երթար։

Քիւրտն այսպէս չվարուեցաւ. և այնպիսի սոսկալի խժդժութիւններ գործեց նա, որ աշխարհի պատմութեան մէջ ոչ գրիչ գրեց, ոչ բերան խօսեց և ոչ մարդոյ ականջ լսեց։

Կ'ասեն թէ Լէնկթիմուր Հայոց աշխարհ արիւնով լուաց. լաւագոյն էր թէ Քիւրտն ևս արիւնով լուանայր։ Կ'ասեն թէ բռնաւոր Այփասլան մի անօրինակ վրէժխնդրութիւն մտաբերելով՝ Անւոյ մէջ արեան աւազան մի կազմեց, Հայոց ջերմարիւն երիտասարդներ ոչխարի նման մորթելով լցոյց զայն, ու մտաւ նորա մէջ ինչպէս 'ի լոգարան, և այսպէս չիջոյց իւր սրտին զայրոյթը։ Երանի՛ թէ Քիւրտն ևս իբրեւ արիւնախանձ ինձ՝ արիւնով միայն չատանայր։ Կ'ասեն թէ խորամանկ Շահապասն մինչ 'ի դերութիւն կը վարէր Այրարատայ աշխարհի որդիքներ, տասներկու հազար հոգի Երասխին մէջ թափեց։ Հաղա՛ր անգամ երանի թէ Քիւրտն ևս այդպէս գործէր. Հայոց կիներ և կոյսեր նոյն Երասխայ

Digitized by Google

ծոցին մէջ թափուէին, ալիքներ առնէր տանէր ու ծածկէր նոցա առականքը։

Դուտե՛ր Հայոց, բիւր երանի՛ կու տայի ձեզ թէ նոր Շահապաս մի գար զձեզ 'ի գերութիւն վարէր, և դուք երթայիք միահամուռ և կամակար թափուէիք Երասխայ գետին մէջ, գետն զձեզ գլորէր տանէր 'ի Կասպիական ծով, ծովն ձեզ գերեզման լինէր, իւր խոր անդունդին մէջ ծածկէր ձեր մերկութիւն, քան թէ կուսական արեան մէջ թաթախելով նշաւակէր զձեզ վատշուէր Քիւրային վայրագութիւն։

Հայոց լերանց մտերի՛մ էրէվայրիք, և դուք խոկ վայրենի՛ գազաններ, բացէ՛ք ձեր որջեր, ցո՛յց տուէք ձեր մութ խորշեր, հիւրասիրեցէ՛ք Հայոց փախուցեալ կիներ և կոյսեր, որ մարդակերաց գազաններէն փախչելով ձեր զթութեան կ'ապաստանին։

Ո՛վ հալածեալ գայլեր, դուք արդար էք, դուք իրաւունք ունիք, երբ սովալլուկ քաղցէն ստիպեալ հաղիւ ահ ու դողով կը համարձակիք հովուի հօտէն գաղտագողի մի ոչխար յափշտակել. ելէ՛ք այժմիկ և լեռներէն դիտեցէ՛ք՝ թէ ի՞նչ կը գործեն ձեր դրացի մարդագէլներ. թո՛ղ գեղացւոց ոչխարներ՝ նոցա սիրելի ընտանիք և զաւակներն եւս յափշտակեցին, և սրածանիքներով պատառեցին ու կերան Հայոց գեղջանի կոյսեր։

Ո՞վ ես դու, ողորմելի՛ կին, որ մերթ խուճապելով կը փախչիս և մերթ ծունկերդ կթուտելով կը տապալիս 'ի գետին. Հէրովդէսի դահիճներ զքեզ կը վարեն. ո՜հ, երկունքդ առ երկիւղի հասեր զքեզ 'ըմբռներ է. որպա համար անցար մտար մեկուսի ցորենաբոյս արտին մէջ, դու ինքնին անդ այնակ ծնար, դաշտի կակուղ խոտերէն խանձարուր շինեցիր, փաթութեցիր մանկիկդ.

Digitized by Google

չգիտեմ թէ բերկրեցա՞ր, երբ անցաւ երկուքդ և ողջամբ ծնար։

Իրիկուն էր, քո ախուր ու սեւ սրտին հետ մութ գիշերն եւս եկաւ զքեզ պատեց. այլ եւս ապահով եղար թէ քո վարիչ որսորդներ անցան. առիր նորածին մանուկդ՝ գնացիր մեռեալ գիւղ. մանկիկդ կուլար կաթ կ'ուզէր, և դու՝ հա՛ց հա՛ց կը խնդրէիր. զի քաղցէն նուազելով կաթդ ցամքեր էր։ Չգիտեմ, դժբա՛ղդ կին, թէ այնուհետեւ ազատեցա՞ր բազէներուն ճանկերէն։

Անշուշտ կ'ողբաս, կի՛ն դու, թէ թշուառ եմ. որոյ ի ծնայ, այլ ամուսին կորուսի. բայց դու զքեզ բախտաւոր համարէ, կի՛ն, որ վերահաս անձկութեանդ մէջ կարացիր ողջամբ ծնել և մանուկդ ազատել։ Քան զքեզ անբախտ եղան այն մայրեր, որ մայրենի գրկերէն մանուկներ ձգեցին ու փախան. որպէս զի գէթ ազատեն իրենց անձն չարաչուք Գրդեաց ելկանքէն։

Ողբա՛մ զքեզ, մանո՛ւկ մայրակորոյս. կ'ասեն թէ քո մայր մինչ 'ի փախուստ կը խուճապէր, մուգաւ մայրական սրտի գորով, ձգեց թողուց զքեզ մի վարած արտի ակօսին մէջ. թերեւս հաւատաց Քրիստոսի խօսքին և ասաց թէ մանկիկս իբրեւ ցորենահատիկ մի ցանեմ հայրենի հողին մէջ, թող մեռնի, որ բեղմնաւորի հատիկս բազմապատիկ ստոյգ ցորենով։ Եւ ի՞նչ է այդ. — Հայոց աշխարհի ազատութիւն։

Զո՞րն եւս պատմեմ մայրերէն ձգուած գիւղիկ մանուկներ. ահեղ գտաւ ու պատմեց թէ մի մանկիկ եւս Եփրատայ ափանց եղէգներու մէջ ձգուած էր, ինչպէս Մովսէս՝ Ղեւոս գետին խաղեր։ Մեր խեղճ մանուկ պրտուկայ անտուկին մէջ չէր կպրաձիւթով պատած, այլ այնպէս բացօթեայ ձգուած. խե՛ղճ անմայր աղեկ կսկան բառնալով կու լար։ Լսեց մի գիւղական աղջիկ, որ նա եւս կը թագուցանէր զինքն գետեղրի մայտաս-

Digitized by Google

ներու մէջ. տիրտարաց, ձայնի հետ գնաց գտաւ ընկերիկ մանուկն. դիւղացի քաջ աղջիկ, որ դեռ մայր չէր եղեր, մայրենի գորովով խաղապատեցաւ տղեկին վերայ. ինչպէս փարաւօնի դուստր՝ առաւ տարաւ մերձակայ գիւղ մի, ասաց թէ Եփրատին եղերք չամբերուն մէջ գտայ։

Զգիտեմ թէ ողջ մնացի՞ր դու, անհայր անմայր որբացեալ մանուկ. ո՞ր օտար մայր քեզ կաթ պիտի տայ ու սնուցանէ, մինչ քո բուն ծնող մայրդ՝ առ նեղութեան ուվչոին, զքեզ անմայր թողուց։ Ո՛ տառապանաց և դառնութեան օր, որ կաթոգին մայրերուն բընական գորովն ու գութ մոռնալ կու տաս և սրտէն 'ի բաց կը հանես որդեկին սէր, որ մօր աղիքն և սրտին հատորիկն է։

Ողբա՛մ զձեզ, Հայո՛ց մայրեր, որ կորուսիք ձեր լծակից ամուսիններ և սիրական զաւակներ. թէ մեռաք՝ երանի՛ ձեզ. թէ ողջ մնացեր էք՝ եղո՛ւկ ձեզ։ Ա՛հ, ի՞նչ կը լինէր, որ դուք եւս այն Մշեցի դիւցազն կնոջ պէս զօրանայիք, ձեր վշտակրութեան և հալածանաց մէջ կամակար մեռնէիք կրօնի սրբութեան համար, ձեր զաւակաց սիրոյն համար, ձեր համեստ պատկառանաց համար. միթէ այժմ կապրի՞ք դուք, և լաւագոյն չէ՞ր ձեզ մեռնիլ քան այդ չարաւիշտ կեանք։

Ի՞նչ անդատաստան կը թօսիս դու, հէք ողբերգու. իրրեւ զառանցող բանդագուշ կը լինիս, կարծելով թէ աշխարհիս վերայ կիներ սուր և բազուկ ունին. մինչ քաջաբազուկ հուժկու այրեր կը վատանան իրենց ընտանեկան պատիւ մահու չափ պաշտպանելու, դու գիտես թէ քանի՞ դժուարին է որ տկար ու տանտիկին կիներ դիւցազնանան։

Ա՛յո՛, այդ գիտեմ. բայց միթէ չառաքինացան Հայոց աշխարհի կանայք ու տիկնայք. մինչ Նոցա այրերը շրջ-

Digitized by Google

թայական վարեցին 'ի Խուժաստան. նոքա անայր և անտերունչ մնացին, կանացի տկարութեան անտար վիշտերուն դէմ մրցեցին, Պարսկական կրակին դէմ անվառ մնացին, կրոն, հաւատ և սուրբ կեանք անարատ պահեցին. որոց չնչխարհիկ առաքինութեան հանդէսը ճառագրելով կը հոչակէ սուրբ Եղիշէ վարդապետ։

Մո՛վսէս, Մո՛վսէս, Բաղրեւանդայ վիճակին ծերունի՛ հովիւ, դու զՀայոց աշխարհ և քո ժամանակ ողբացիր և 'ի հող մտար հանդչեցար. այլ եւս չգիտես թէ քո անթաց անդաւաղան ստրկացեալ հայրենեացդ ողբեր զաղրեցա՞ն։

Ո՛չ, ո՛չ. տասն դար անցաւ, տակաւին ողբերդ դառնալոս կը նորոգուին. դու այժմ զլուսդ դերեզմանէդ 'ի վե՛ր առ, տե՛ս քո սիրելի հօտին վերահաս աղէտները. քանասար զայլերուն վոնմակ յարձակեցան, գառներդ կոտորեցին, որոց յորդահոս արիւն՝ չիրիմդ կ'ողողեն և կ'ելջնան մինչեւ 'ի խոր տապանիդ հեծող ոսկորներդ։

Դու ինչպէս տեսնալով կ'ողբաղրէիր, արդ եւս արհաւիրք անհնարինք պատեցին Հայոց աշխարհ. մարտ թէ 'ի ներքուստ և թէ արտաքուստ զմեզ պաշարեց, հայրենիքը թափուրացաւ, մնացորդ որդիքներուդ կէսն թողլով բնակասնունդ երկիր՝ գաղթական գնաց, կէսն եւս անխնայ կոտորուեցան սուրբ կրօնին համար և Հայոց հաւատին համար։

Եփրա՛տ, Եփրա՛տ, մկրտարա՛ն սուրբ Դրիգորի հոգեծին որդւոց, ափունքներուդ վերայ ինկած դիակները արեան հեղեղներ թաւալգլոր բերելով քո ծոց կը թափեն, եւ դու տո՛ւր ալիքներուդ՝ թող գլորէ տանի մինչեւ Ովկիանու ափունք. Հայոց աշխարհի անմեռունչ բողոքն է այդ։ Կը լսէ՞ արդեօք և կը տեսնո՞ յ աշխար-

հի արեան հանդիսատես խաղաղասէր Լօնտօն. թէ այդ է շահ մեծին Անգղիոյ, որ քան զինքն յառաջ Աւետարանին հաւատացող որդիքներ տարապարտ մեռնին։

Բադրեւանդայ փոքրիկ հօտին փոքրիկ հովիւներ, ո՛վ քահանայք, թէ ողջ մնացեր էք՝ առէ՛ք ժամարներ հետ ձեզ, գնացէ՛ք շրջեցէ՛ք քաղաքի փողոցներ, տներ և տան մութ խորշեր որոնեցէ՛ք. շրջեցէ՛ք նաեւ գեղերու և դաշտերու մէջ, ժողվեցէ՛ք ուր և գտնէք Հայոց անթաղ մեռելներ. զի մեռելներու տէրեր թողին ու փախան. ծնողք փախան՝ զաւակներ թողուցին, զաւակներ փախան՝ ծնողք թողուցին. նոյնպէս անբաժան սիրելի ամուսիններ սէրը մոռցան, զիրեար թողուցին ու փախան։

Մի մի կամ ուրոյն ուրոյն գերեզման մի՛ փորէք այդ անտէր մեռելներուն, այլ բոլոր միահամուռ խոր վիհերու մէջ թաղեցէք. միայն խաչքարէ նշան մի կանգնեցէք հողակարկառին վերայ. ես ասա կ'արձանագրեմ նոցա սուրբ և անմահ յիշատակը։

ԱՍՏ ԿԱՏԱՐԵՑԱՆ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՑ ԱՆՈՒԱՆ ՀԱՄԱՐ ՔԻՒՐՏԵՐՈՒ ԱՆՈՂՈՐՄ ՍՐԷՆ, ՕՍՄԱՆԵԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆ ՀԻՆԳ ՀԱՐԻՒՐ ՏԱՐՈՒԱՆ ՀԱՒԱՏԱՐԻՄ ՀԱՑԵՐ։

Փողոցէն ելէ՛ք, քա՛հանայք, մտէ՛ք այդ մերձակայ տան մի սենեկին մէջ, ուր երկու նոր ամուսնացելոց հարսնարան և առագաստն է. տեսէ՛ք, գուցէ կը ճանաչէք. թերեւս դո՛ւք պսակ դրիք ու կապեցիք այդ դժբաղդ գլուխները. տեսէ՛ք զոյգ համանման նորահաս կտրիճ ամուսիններ, երկու լծակից սիրելիները, զոր վայրագ քիւրտեր միմեանց վերայ դնելով ընդ դեռին գամեր են, որ գիտես թէ ուխտեր էին նոյն իսկ մահուան մէջ իրարմէ չբաժնուիլ։

Digitized by Google

Հանէ՛ք այդ արիւնոտ ցիցը, հանէ՛ք ու տարէք պահեցէք. եթէ դատ և դատաստան լինի աշխարհիս մէջ, եթէ Հայուն զրկանքն եւս յիշեն երկրիս դատաւորներ և արդարութեամբ վիսխարէն յատուցանեն, յայնժամ դուք զայդ դատական ատենին մէջ բերէք, թող բողքէ, վկայ լինի Հայոց անպարտ արեան։

Առէ՛ք նաեւ իջուցէ՛ք 'ի վայր ընդ ձող և ընդ ցից հանեալ Հայոց սօսանման երիտասարդներն. արեւ տեսաւ, լուսին տեսաւ, աստղեր տեսան, աշխարհ տեսաւ և Աստուած տեսաւ. այլ վկայ կը խնդրէ՞ք, ո՛վ աշխարհի ատենական դատաւորներ։

Համառօտեցէ՛ք, համառօտեցէ՛ք աշխարհի խաղաղութեան դաշնագիր. համառօտեցէ՛ք ձեր երկար և պատիպատ դատաստանին վճռագիր, տեսցուք թէ Հայոց այնչափ զրկանաց, այնչափ զոհերուն և թափած արեան գինը դուք ի՞նչ կը վճռէք։

Ժա՛մհար, թո՛ղ այդ ցցահան դիակներ, մոի՛ր 'ի տանտուն թոնրին սալխուին 'ի վե՛ր առ. տե՛ս, մարած մոխրին վերայ խանձողած կոճղ մի կայ, հա՛ն 'ի դուրս. մի՛ կարծեր թէ այրած հացի կուտ է այդ, այլ հացթուխ և հացարար տանտիկինն է, որ մինչ բարկ թոնիրին շուրջ նստած անօթի քիւրտին համար հաց կ՝եփէր, ապիրատներ կերան նորա հաց, զարկին ձգեցին վառած թոնիրին մէջ ու գնացին։

Թէ գիր գիտես, Ժա՛մհար, համրէ ու գրէ թէ քանի՞ քանի Հայոց տանտիկներ այդպէս հրայրեաց չարամահ մեռան։ Թոնիրներէն ելած բոլոր Հայոց կիներուն խանձողուած նշխարները, Ժա՛մհար, լի՛ց կողովը, շալակդ առ, գնա՛ մինչեւ յԵրուսալէմ, չո՛ւրջ ած պալատականաց դռները. տեսցուք թէ աշխարհիս այդ ողորմած թագուհիներ Հայոց այրած տանտիկներուն համար ի՞նչ դատաստան պիտի տեսնեն։

Digitized by Google

Ո՛վ ժրագոտի ժամհարներ, թողէ՛ք այդ թոնիրի այրածներ. փութացէ՛ք կողովներ առէք ձեր յուս՝ ելէք հնձանի դաշտ. Հայոց այգեկութն է. ժողովեցէ՛ք այդ կոխոտուած մանրիկ ճիւներ, Հայոց մանուկներու նշխարներ, զորս Լէնկթիմուրի ժանտածին զաւակը սրակակոխ կոտորեց, ու քամեց Հայկայ զաւակներու արիւնը՝ որպէս քամեն խաղողն 'ի հնձանին։ Խնամով ժողովեցէք այդ փոքրիկ մարտիրոսներու սուրբ և սրբիծ նշխարներ, տարէք թաղեցէք իրենց հարց ու մարց հետ. եթէ անողոք սուր դիրենք ծնողական գրկերէն բաժնեց, թող դերեզմանին մէջ ոսկերոտաք գրկախառնին։

Միթէ սերմանահան մշա՞կ էք դուք, որ գոգնոցը կապելով այդ մատաղ ու պարարտ սերմեր կը ցանէք Եփրատայ արգաւանդ դաշտերուն մէջ։

Ցանեցէ՛ք, ցանեցէ՛ք այժմիկ և յուսով ցանեցէք. թող այդ անմահ հատիկներ մեռնին հողին մէջ. կ'անցնի ձմեռն, կ'անցնին խստաշունչ սառնամանիք, կու գայ կենդանարար գարուն, դերեզմանի արտերդ կը կանաչին, և դուք կը հաւատաք յայնժամ Յիսուսի խօսքին, թէ «Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի՝ ինքն միայն կայ. ապա թէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ։»

Հնձանի դաշտին մօտ՝ այդ վարած արտերու մէջէն դառն մռնչիւնի ձայներ կու գան, կը լսէ՞ք, ժա՛մհարներ. այդ մռնչիւն՝ մորթազերծ անասնոց մռնչիւնն է, որ հերկագործ ակօսներու մէջ ինկած կը տանջուին. վերէն արեւ կը կիզահարէ, ներքուստ գիշակեր անգղեր և ագռաւներ կոցահարելով՝ թել թել միսեր ոսկորներէն կը քաշեն։ Դանակ մի առէք՝ կտրեցէք նոցա վիզեր, որ երթան հանգչին։

Ո՛վ սոսկալի անգթութիւն. անագորոյն գրդեր հալածելով հասան, մանկալներ, հօտաղներ սրակոտոր

սպանին, և թրերով կտրատեցին եղնամոլներուն և գոմէշներուն հաստասլինդ ջիլերը. խե՜ղճ անասուններ տապլտկեցան ակօսներու մէջ, և առանց պարանոցներ կտրելու՝ սկսան շերտ շերտ քամակներէն կաշիներ հանել. այդ անվարտի միաչապիկ բոկոտն վայրենիք տրեխներ չինեցին իրենց համար. որ կ'երթային երկաթէ կօշիկներուն հետ կռուիլ։

Արդա՜ր Աստուած, եթէ դու աշխարհիս վերայ յանցապարտներ՝ և մերթ եւս անմեղներ տանջելով կը լնուս ու կը կատարես արդարութեանդ չափն ու հաստուցումն, միթէ անասո՞ւնքն եւս յանցապարտ են քո առաջ. այդ անողորմ ամրարշտաց աղիքներ չե՞ս կտրատեր նոցա վորին մէջ. դու որ Գինուէի անասնոց խընայեցիր, այս անխօսուն հեծող անասնոց դատաստանը չե՞ս տեսներ։

Արեւն 'ի մայր մտաւ, այլ ձեզ համար հանգիստ ու դադար չկայ, կորի՛ճ ժամհարներ. Տովրիթի նման առաքինացէ՛ք, գիշերաժամուն ելէք՝ լուսնի լուսով ժողովեցէք Հայ մարտիրոսաց նշխարներ. մայրերու գրկէն ու կուրծքէն մի՛ բաժնէք յօշոտուած մանուկներ. մի՛ դպիք, մի՛ կրկոտէք այդ արիւնշաղախ դիակներ. պատան պէտք չէ՛, կանաչ խոտերու մէջ վիթթեցէք Հայոց կանաչարեւ և ժուռումուռ մեռելներ. թէ պատառ մի կտաւ կը գտնէք, կենդանւոյն մեռած Հայոց հոլանի կիներուն և կոյսերուն տուէք, որ պատատեն իրենց առականքը. բաւ է՝ թէ այդ անտէր մեռելներ, Քրիստոսի անուան զոհեր՝ իրենց արիւնոտ շապիկներով և պատառատուն ցնցոտիներով թաղէք։ Թող նոցա ոգիներ երթան Երկնից մէջ պայծառազգեստ լինին։

Այլ գիտե՜մ ես, գիտե՜մ, ո՜վ Հայոց անթաղ դիակներ, ձեզ համար ոչ քահանայ կայ, ոչ ժամհար, ոչ յուղարկաւոր, ոչ սիրելի, ոչ բարեկամ. սարսուռ և

արհաւիրք ամենուրեք տիրեր է, ո՞վ կը համարձակի կատարել ձեր թաղման հանդէսը։ Ո՜հ, ո՜հ, Հայո՛ց որդիքներ, հող ու դաշտ չատ ունէիք, գետնի երես դուք անհող, անծածկոյթ մնացիք, երկնից թռչուններ և երկրի չուներ ժողովեցան՝ կերան ձեր մարմին, կրծեցին ձեր ոսկորներ. մինչ ողջ էիք՝ բռնութիւն զձեզ կեղեքեց ու քերթեց. և մեռնելէն յետոյ՝ թերեւս ասացիք թէ ազատուեցանք տառապանքէն, հանգչինք հոգին մէջ. ո՛չ, ո՛չ, հանգստեան հող չտուին ձեզ. զի նոյն անողոք բռնութիւն՝ ձեր անչչունչ դիակներն եւս հարստահարեց։

Ո՛վ՝ Լուսի՛ն Լուսին, Հայոց աշխարհէն կու գաս, Բագրեւանդայ կոտորածի դաշտերէն անցո՞ր. այնպէս կը թուի որ դիշերաժամուն մէջ շառաւիղներդ արիւնոտ դիակներու վերայ զարնելով՝ երեսդ շառագուններ է։ Մի՛ անցնիր ճեպով. պահ մի կա՛ց Բիւզանդիոնի հորիզոնին վերայ, պանդուխտ Հայերուն լո՛ւր տուր Հայոց աշխարհէն. լո՛ւր տուր մեր թշուառ ընտանիքներէն, ո՞վ մեռաւ, ո՞վ մնաց, ո՞վ դերեցաւ և ո՞վ թողուց հայրենիք՝ գաղթական դնաց։ Թողուց իւր հասած հունձեր, թողուց իւր հօտն ու նախիր, թողուց իւր կեանքն և ամենայն ինչ։ Մերկ, կողոպուտ դնաց. ասաց թէ՝ անցնիմ այս կարմիր ծովէն և միանդամ ազատիմ չարչարանաց աշխարհէն։

Ո՛վ՝ Լուսի՛ն Լուսին, Մասիսի գագաթէն անցո՞ր, ղաչերդ չուրջ ածի՞ր, Արագածի ոտքը՝ Էջմիածնայ պարսպին տակ թափած Հայոց գաղթական ժողովուրդն տեսա՞ր որպէս յաշնանավերջին ծառերէն թափուած դեղնած տերեւներ. դիտեցի՞ր նոցա ապաժոյժ վիճակ. տեսա՞ր այն գետնի վերայ նուաղած ու թալկացած մայրեր, որոց ցամքած կուրծքերէն կախուեր էին դիեցիկ մանուկներ. նոքա կական բառնալով կաթ կը խընդրէին և մայրեր զկաց։

Digitized by Google

Ո՛վ Հայր ու Հայրապետ Հայոց, Էջմիածնայ վեհարանի լուսամուտէն կը դիտէք դէպ 'ի Բագրեւանդայ կոտորածի դաշտ, թէ կ'ասէք հեռու է աչքէս և կարճ է իմ ձեռքս. ուրեմն թողէ՛ք մեռելոց դաշտը՝ դարձուցէ՛ք ձեր աչքը գաղթական ժողովուրդին վերայ, որ կենդանւոյն մեռած ու թաւալած են Էջմիածնայ պարիսպներուն տակը։ Էլ այտի, դու ինքնին հայրական գորովովդ մատակարար եղիր. դոքա սուրբ Գրիգորի հնացորդ որդիքներն են. տե՛ս, ի՞նչպէս մերկ, կապուտ կողոպուտ, անինչ անստացուած ձեր հայրական գիրկ դիմեր են, հաց կ'ուզեն, հանդերձ կ'ուզեն, հանգըստարան կ'ուզեն. ժողովէ՛, պատսպարէ՛ զիրենք Այրարատայ ծոցին մէջ։ Դոքա Եփրատայ ակներէն և Նպատ լեռնէն կու գան, Երասխէն, Արագածէն և Մասխէն պաշտպանութիւն կը խնդրեն, ո՜հ, չգիտեմ թէ կը գտնե՞ն՝ թէ յուսով կը թափառին։

Ո՛վ իմ լրացեալ Լուսին, Վասպուրական աշխարհի Աղբակու գաւառէն անցա՞ր, և ի՞նչ տեսար. ես քան զքեզ յառաջ գիտեմ այդ, դու պատմէ՛ մեզ։ Պարսկական Քրդաց հրոսակներ յարձակեցան, աւարեցին տարան բոլոր Հայոց գեղեր։ Անճարակ ժողովուրդ երբ մերկացաւ իւր կեանքէն և գոյքէն, շուարեցաւ մնաց. ասաց թէ ո՞ւր երթամ, ո՞ւր ապաստանիմ, գէթ հոգիս ազատեմ. երկու կրակի մէջ մնացի և կը խորովիմ։ Ո՜հ, ակամայ ընտրեց նա թողուլ քաղցր հայրենիք՝ գաղթական երթալ, կամովին ձգել զինքն Պարսկական հին կրակին մէջ, որ երբեմն մեր աշխարհ և մեր նախնիքներ վառեց ու մոխիր դարձուց։

Բա՛ր դուղիմէ, Բա՛ր դուղիմէ, Հայոց նախկին լո՛յս ու լուսաւորիչ, ո՞ւր ես. տարա՞ն, տարա՞ն քո փոքրիկ հօտն ու ժողովուրդ, որ քո հովանեաց տակ և գերեզմանիդ շուրջ կը բնակէր։ Կողոպտեցին ու քանդեցին հաղարամեայ հնաչէն վանքդ. այդ բաւական չէր, յան-

Digitized by Google

դգնեցան պիղծ ձեռքեր փորել ու կրկտել հազար ութ հարիւր տարուան կնքուած տապանդ. այդ յիմար և ապիրատ ազգ կարծեց որ գերեզմանդ գանձերով լի է կամ սուրբ ոսկորներդ ոսկի դարձեր են։

Այլ եւս ինչ որ գիտես ու տեսար, պատմէ՛ մեզ, ո՛վ Լուսին, Հայոց աշխարհի ցաւեր և աղէտներ մեզմէ մի՛ ծածկեր։ Կ՚ասեն թէ մեր հաւատոյ ոսոխն ու խըչնամին . . . երբ Բագրեւանդայ կոտորածէն յետոյ կը դառնար, գեղեցիկ կիներ ու կոյսեր ընտրելով առաւ տարաւ իւր բանակին հետ. տարաւ փակեց Խիզանու գաւառին մէջ, ուր այդ չարաշուք գաղանին որջն է. ուր 'ի սկզբանէ անտի սովորած էր միշտ Աւետարանի հատէն հանել ու խառնել իւր գունդերուն հետ։

Լէնկթիմուրի գերեզմանի որդերէն ծնած ո՛վ չարաճճի սողուն, կրծելով կրծեցիր Հայու միսն ու ոսկոր, օձանման սողալով մտար Հայոց դրախտը, ամէն ծաղիկներ և կանաչ բոյսերը պղծելով ապականեցիր, չարչարեցիր Աստուծոյ խոնարհ ժողովուրդ, և ասացիր դու ինքնին թէ՝ ո՛չ կը տեսնայ և ո՛չ 'ի միտ կ՚առնու Ցակովբայ և Գրիգորի պաշտեալ Աստուած։

Իմացի՛ր, իմացի՛ր, ո՛վ անմիտ և անդգամ, թէ արդար դատաւորն Աստուած իւր ծառայներուն վրէժխնդիր է, և նոցա անպարտ արիւն պիտի խնդրէ քու ձեռքէն. կը մեռնիս և 'ի դժոխս կ՚իջնաս. նոյն գերեզմանի որդունք՝ յորմէ ծնար դու, և դքեզ պիտի ուտեն ու կրծեն. պիտի փշրին սրամտանի առամունքներդ, զորս կը կրճտէիր հաւատացեալ ծառայներուն վերայ։

Ո՜հ, Հայո՛ց աշխարհ, ո՜հ, աղէտներդ անբաւ անկշիռ են, զորս կրեցիր դու այս նոր Լէնկթիմուրի ձեռքէն։ Ես ուշամոռաց եղայ և չգիտեմ թէ զո՞րն ողբամ։ Քանդուած գեղե՞րդ ողբամ, վարատեալ ժողովո՞ւրդդ

ողբամ, 'ի սար և 'ի ձոր թափառական ընտանիքնե՞րդ ողբամ, հայրենիքէն վարեալ գաղթական որդիքնե՞րդ ողբամ, յափշտակեալ կիներդ և կոյսե՞րդ ողբամ, քանդուած վանքերդ և սրբեալ սահմանե՞րդ ողբամ, անհաց, անապրուստ, անճարակ ու թշուառ կեանքդ ողբամ, վաստակաւոր մշակնե՞րդ ողբամ, որ բարդ 'ի բարդ հնձուեցան ու որայի նման փռուեցան արտերուդ մէջ, որոց արեան ցնցուղներ ցայտեցին և կարմիր ներկուեցան ցորենի հասկեր և հատիկներ։

Պահ մի կերէ՛ք այդ արիւնոտ հաց ու յաղեցէք, դուք՝ որ երկրագործ ժողովուրդը կոտորեցիք, վաստակաւոր եղնամոլներ մորթեցիք, հողագործին խոփն ու հարօր և սայլեր ջախջախեցիք, ոչխարաց հօտերը լեռներէն աւարեցիք, կաթնարար տանտիկները կամ մեռուցիք կամ փախուցիք. ինչ որ արդիւնաբեր էր երկրին և տէրութեան շահ, ինչ որ ձեր անշահ և անվաստակ կեանքին առատ հացն ու սեղանն էր, դուք զայն ամեն ձեր ձեռքով կործանեցիք. կարծեցիք թէ ուրիշներու կեանքը կ'սպաննէք ու կ'սպառէք, բայց դուք ինքնին անձնասպան եղաք ու չիմացաք։

Տեսցուք այսուհետեւ թէ ուստի՞ պիտի յաղենայք, երբ մշակ ժողովուրդին կեանքն և դիմը չլատեցիք. նոքա որ մեռան, հողն իրենց հանգիստ գտան ու ազատուեցան տառապանքէն. օ՜ն և օ՜ն արասցէ Աստուած՝ եթէ դուք առանց հողի և մշակի՝ ողջ մնայք երկրիս վերայ։

Ո՛չ միայն կշտապինդ կերայք, այլ և խեղճ գեղացւոյն կեանքը անխղճապէս կողոպտեցիք, ոչ ինչ չթողիք. թէ չտեմարանին մէջ մի գոռ ցորեան կար, թէ իւղամանին մէջ մի կաթիլ իւղ, թէ մառանին մէջ փոքր ինչ պաշար՝ որ իւր տղոց բաժին ու հոգեպահիկն էր, զայն ամեն հանիք թափեցիք 'ի դուրս, աղբիւաներու մէջ խառնեցիք, որպէս զի գիւղացի ընտանիք սովալլուկ

Digitized by Google

մեռնին. բայց միթէ դուք պիտի մնայք ու ապրիք, ժա՛նտ խորամանկներ։

Ո՞հ, որչա՛փ իրաւ կը լինիմ ես, և ո՞ տայր ինձ, Հայո՛ց աշխարհ, որ ողբերուս հետ սփոփանք խառնելով զքեզ մխիթարէի և սրբէի լացող ժողովուրդիդ գետահոս արտասուքը, զոր թափեց նա իւր արեան հետ։ Բայց ես էլ կը վարանիմ Մարգարէին պէս և կը գոչեմ, «Ո՞վ մխիթարեսցէ զքեզ, դո՛ւստր Սիոնի, զի ծանրացաւ բաժակ բեկման քո»։

Այո՛, կարի յոյժ դառնացաւ քո բաժակ, Հայո՛ց աշխարհ. չգիտեմ թէ ո՞րպէս յուսադիր լինիմ ու մխիթարեմ զքեզ. զի ես էլ քո տարաբաղդ որդիքներէն անմխիթար մի զաւակն եմ, որ բախտն ինձ միշտ լալ վիճակեց ու երբէք չխնդացի։ Եւ ի՞նչպէս խնդայ քո հէք ողբերգուն, երբ քո կեանք՝ ողբոց ու ցաւոց աշխարան է։

Այլ մխիթարեա՛ց, մխիթարեա՛ց, Մա՛յր Հայաստան, զի դու սովորած ես ցաւեր ու վիշտեր կրել. հազար անգամ մահաբեր երկունքներ զքեզ ընդունեցին և դու հանդուրժելով անցուցիր երկունքներդ և ողջ մնացիր։ Հազար բիւր աղէտներ տեսար, միշտ որդիքներդ ջըրկէդ վարատեցան, բայց դու երբէք չվհատեցար, զի ոգիդ պողպատի նման պինդ և աննկուն է։ Հազար անգամ գերեզմանին դուռը հասար, թշնամիներդ տեսան՝ ծափ զարկին, թէ վա՛յ, մեռաւ Մայր Հայաստան, և դու անդրէն Ղազարոսի նման վերածնար գերեզմանէն։

Միթէ մարդոյն կամ օտարին ձեռք կարո՞ղ է զքեզ մեռուցանել, երբ դու ինքնասպան չը լինիս, և երբ յոյսդ անմահութեամբ լի է։ Թէ խորամանկութիւն կը ճգնի որդիքներդ ընկճել, որչափ հնարէ՝ հարստահարել

ու վարատել, որպէս զի դու անբարդաւան մնաս, անճեռ սպառիս, կամ այդ վերահաս թշուառութեանդ մէջ բոլորովին չքաւորիս, նկուն դառնաս, ոգիդ ստրկանայ և երբէք ազատութիւն չմտաբերես։

Թէ աշխարհիս խորամանկութիւն քեզ համար այսպիսի դաւ կը նիւթէ, դու եւս փորձառութեամբ ուսի՛ր, խորագէ՛տ եղիր, այնպէ՛ս անցիր դաւերէն՝ որ զքեզ չտեսնայ դարանամուտն. յուշի՛կ անցիր գնա՛ յառաջդիմութեանդ մէջ. մի՛ դոշեր, մի՛ աղաղակեր. թէ կը խօսիս, թէ կը գործես, լո՛ւն և անձայն եղիր։

Մի՛ վհատիր, ժո՛ղովուրդ, թէ զքեզ չարչարելով խանարհ արարին, ուրքիդ առաջ որոգայթներ լարեցին. դու հաւատ ունիս, Աւետարան ունիս, խաչակրութիւն ուխտեր ես, կոխի՛ր, անցի՛ր այդ Բարիլոնի կրակը, թող տեսնան ու զարմանան աշխարհի որդիքներ։

Այս աշխարհ և սչխարհիս գահեր՝ ամեն գայթագղութիւն և որոգայթներ ունին. խեղճ և ստրուկ ժողովուրդներ բռնաբարուած են և կը գոչեն ազատութի՛ւն ազատութի՛ւն։ Այլ ոչինչ ճար չունին, դորա միակ ազատութեան ճար՝ լոյս և կրթութիւնն է. դու զայն երբ 'ի ձեռս բերես, այն օրէ միայն քո ազատութեան աօնահանդէս։

Ո՛վ Բագրեւանդայ դժբաղդ որդիքներ, վայրագ խուժն զձեզ կոտորեց, վատ և ապիկար քիւրդն ժողովեց տարաւ զձեզ 'ի սպանդանոց, դանակը առաւ և միահամուռ մորթեց զձեզ, կացնով ձեր ոսկորներ ջարդեց, դուք անխօս՝ անմռունչ՝ անշարժ մնացիք, որպէս ոչխար՝ իւր կտրչին առաջ։

Անխնայ մորթուեցայք, այլ եւս պիտի մորթուիք. այս աշխարհիս օրէնք, կարգ ու խղճմտանք այսպէս է.

Digitized by Google

մարդիկ՝ որ տէր են և կ'իշխեն անասնոց, ոչխարի նման՝ մարդիկներէն պիտի մորմռուին, երբ չունին խեթ-կիշ եղջիւր, որ ցուլի նման ողորին իրենց կտրիչներուն դէմ։

Յո՜ւշ, յո՜ւշ, ո՛վ կոտորուած դառներ, ո՛վ Հայոց ողջ ու մնացորդ որդիքներ, դեռ պիտի կոտորուիք, դեռ պիտի մորմռուիք այդ չքոտի ֆիւրդերէն, քանի որ անզէն, անեղջիւր, անասպար կ'ապրիք. դուք մարդ էք, ձեռք և բազուկ ունիք, միթէ անզգացած մեռե՞ր է ձեր սրտմտութեան ոգին. միթէ կը հաւատա՞յք որ իշխանութեան աչքը հասնի մինչեւ Հայոց ամայի լեռներ ու դաշտեր և ձեզ պահապան լինի։

Ես գիտեմ ու կը տեսնամ դքեզ, որ իրրեւ մի անյարիր անդամալոյծ՝ Պրովպատիկէ աւազանին շուրջն ինկած, անոք, անօգնական մնացեր ես. ո՜հ, հիւանդութեանդ չրջանը չէ թէ երեսուն և ութ ամ է, այլ չորեքհարիւր ամ, անդամներդ ամեն բեկբեկուած, ոտքէդ մինչեւ 'ի գլուխդ վէրքերով լցուած, մարդ չի՛ հաւատար թէ դու այլ եւս կ'ողջանաս ու կը շրջիս աշխարհիս վերայ. ոգիդ կենդանի է ու կը տրտմայ, չունչ մի ունիս, որ շարունակ կ'աղաղակես ու կը պաղատիս, Տէ՛ր, ես անոք եմ և չունիմ ինձ օգնական, որ զիս աղատութեան աւազանին մէջ ձգէ և ես բժշկուիմ այս չարախտ և չարաշուք սարկութենէն։

Գոչէ՛, գոչէ՛, ո՛վ անճարակ հիւանդ, քո օգնական՝ Տէրն է. աշխարհիս վերայ քեզ ոչ ոք օգնական չկայ։ Դու Պուլկար չես, որ Օրթոտոքս Եկեղեցւոյ Զարը քեզ զօրավիգ հասնի. Կաթոլիկ չես, որ Հռովմ կամ Ֆրանսան զքեզ պաշտպանէ. Բողոքական չես, որ սուրբերու բարեխօսութիւն թողուս և Ամերիկանու Թագուհին քեզ բարեխօս բռնես, որ թերեւս գթայ և դարման տանի. զի դու Հայաստանեայց Եկեղեցւոյ ազատ զաւակն ես, իրրեւ անծանօթ՝ մոռացեալ երկրի մէջ կը բնակիս.

Digitized by Google

որա՞ համար արդեօք մարդոց սրտին ու մարդասիրութենէն մոռցուած ես դու։

Մատի՛ր, ո՛վ Ցիսուս, մատի՛ր, հիւանդ և անկեալ Հայուն օգնական չկայ աշխարհիս վերայ, մատի՛ր, ձե՛ռն տուր այդ հինօրեայ անդամալուծին, որոյ բազմապատիկ ցաւոց ու վիրաց վերայ այլ եւս անհնարին ցաւս ու վէրս յաւելին այժմիկ։ Ա՛խ, ո՛վ ազատարար բժիշկ և փրկիչ, թէ արի՛, ա՛ռ զմահիճս քո և ե՛րթ յապաստութիւն։

Ո՛վ դու մաշած և հիւծած հիւանդ, թէ յիրաւի՛ բժշկութիւն կը ժտես, թէ ստոյգ ազատութեան կը ցանկաս, օ՛ն ուրեմն, փոքր ինչ խլրտի՛ր մահճիդ մէջէն, ինքնաչա՛ւթ եղիր. ահաւասիկ Աստուծոյ մատն ու հրեշտակ աշխարհիս յեղափոխութեան աւազանին ջուրերը կը յուզեն. ով որ զինքն վաղ ձգէ նորա մէջ, նա միայն իւր ցաւերէն ազատ կը լինի։

Թէ չգիտես, ես՝ իրրեւ դաս՝ խօսիմ քեզ, որ դու խելամտիս թէ քանի՞ թանգ է ազատութեան գին. աշխարհիս Փրկիչ դայն իւր խաչով և արիւնով գնեց. նոյնգունակ մեր նախնի քաջեր Եկեղեցւոյ և Հայրենեաց ազատութիւն մահով և արիւնով գնեցին։ Միթէ դու ցանկալի ազատութիւն առանց զոհի և արեան ձրի՞ ստանալ կ՚ուզես։

Թո՛ղ, թո՛ղ որ դարձեալ ողբամ զքեզ, Հայո՛ց աշխարհ և ժողովուրդ. մինչ աշխարհիս ջրայուզման և արեան ալիքներուն մէջ այլ և այլ ազգեր կը լողան ազատութեան նաւահանգիստ գտնել, դու ալեաց ելեւէջներու մէջ կը տատանիս. գիշերալոյս փարոսներ չունիս, նաւահանգի՛ստ, նաւահանգի՛ստ, կ՚որոնես և չես գտներ։ Այդ յայանի է, թէ դեռ անարուեստ ես, լողալ չգիտես։

Թո՛ղ ուրեմն այժմիկ ազատութիւն, միայն խաղաղութիւն խնդրէ. դեռ քեզ համար ուսումն և կրթութիւն պէտք են, և դու այդ քո տատանման մէջ պետ-

Digitized by Google

բոսի նման ձեռներդ Ցիսուսին կարկառէ և ասա. Տէ՛ր, քո ձեռն տուր՝ զիս փրկէ. եթէ թողուս ու չփրկես, Տէ՛ր, ես կը կորնչիմ աւասիկ։

Ցուշ կ'առնեմ քեզ, Տէր, մինչ մի նուագ Տիրերական ծով կ'ալեկոծէր, դու 'ի խելս նաւուն անխառով կը ննջէիր, ձայն տուին քեզ աշակերտներդ, զարթի՛ր ասացին, Տէ՛ր, զարթի՛ր, զի կորնչիմք աւասիկ։

Ո՛վ դու անքուն պահապան աշխարհի, որպէս թէ չէիր գիտեր և չէիր լսեր ծովալիքներուն ձայն, ելար յանդիմանեցիր նոցա թերահաւատութիւն, մոնչող ծով լսեց քո ձայն ու հանդարտեցաւ և դարձաւ 'ի խոր խաղաղութիւն։

Մինթէ և այժմ կը ննջե՞ս դու երկնից գահուդ վերայ, և երկիր՝ որ ոտքիդ պատուանդան է, կը սասանի ու կ'երերայ. պատերազմի դաշտերէն Կրուբի ահեղ թնդանօթներ կ'որոտան, հրալից դնտակներ կը թափեն, մի խուն վայրկենի մէջ ժողովուրդի կայտառ զաւակներ բարդ 'ի բարդ որայի նման մահուան ագարակներու մէջ կը թօթափեն, և դու չե՞ս տեսներ և չե՞ս իմանար։

Հայեա՛ց և տես, ո՛վ Տէր, թէ ի՞նչպէս Սպիտակ և Սեւ ծովերու կատաղի կոհակներ զիրեար կը բաշխեն, հիւսիս և հարաւ հակառակ հողմերով փոթորիկներ կը հանեն, երկուստեք սեւ սեւ ամպեր կ'որոտան, բարկամայթ կարկուտներ կը թափին, աշխարհիս մարդկուխեան ծառերն ու ծառաստաններն ջարդուելով լեհուելով տապալեցան 'ի գետին։

Երբ այս ծովեր կը խռովին ու ցամաքն եւս արեան ալիքներով կը ծփայ, ի՞նչ կը խորհի և կը գործէ խաղաղական Ովկիանոս. —ներքուստ միայն կը մռնչէ նա և ուրիշ ոչինչ։ Իւր խուլ և անորոշ ձայնէն միայն այս կը լսեմք, որ կ'ասէ. գնացէ՛ք կռուեցէք. ինձ ոչինչ է փոյթ. միայն թէ հեռո՛ւ հեռո՛ւ, իմ շահուս մի՛ դպիք, ապա թէ ոչ՝ և ես կը յուզուիմ։

Digitized by Google

Ո՛վկիանէ, Ո՛վկիանէ, որ կը պարծիս թէ ամեն ծովերէն մեծ և հարուստ եմ, որ կը քարոզես թէ մարդասէր եմ, խաղաղութիւն կը սիրեմ, Աւետարան կը սիրեմ, և յաճախ կը կարդաս Քիստոսի այս բան « Երանի՛ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին. » :

Երկնից աչք կը տեսնայ, գիտէ և կը քննէ քո խորերիկամունք. իսկ աշխարհի առաջ չքմեղս լինելով ստէպ ստէպ յայտարարեցիր, թէ տքնեցայ ու ջանացի որ խաղաղութիւն հաստատեմ, բայց ընդունայն համարեցաւ իմ ջանք. ձեռքս լուացի և ասացի թէ քաւեալ եմ ես այդ պատերազմի արենէն. և դու սառն աչքով կը դիտես այսի այժմ արեան դաշտին վերայ :

Ո՛վ գահերու դատաւոր Աստուած, կը տեսնաս դու, Արեւելեան խնդիր մի կայ աշխարհիս վերայ, որ Գորգեան հանգուրց դարձեր է. այս քանի՞ամ է, որ այդ խնդիրը աշխարհները կը խռովէ, ժողովրդոց խաղաղութիւնը կը բառնայ. Եւրոպիոյ գահերն ու դիւանագէտք չկամեցան կամ չկարացին լուծել զայն, զոր հին դիւցազն Աղէքսանդր մի հարուածով ընդ մէջ կտրելով լուծեց այդ հանգուրցը :

Իսկ նորն ասաց, 'ի բա՛ց կացէք, ձեռնամուխ մի՛ լինիք, այդ խնդիրն իմ բաժին և իրաւունքն է, թողէք ես միայնակ կը լուծեմ զայն : Զարնելով զարնելով բազուկներ պարտասեցան. կ'ասեն թէ սուրն ես բթացաւ, և հանգուրցը դեռ անլուծանելի մնաց :

Ո՛վ դժոխային կնճիռ, որ մարդկանց արիւնով կը մածանիս և քա՛նի երթաս՝ կը կնճռիս, թշուառ ժողովուրդներ որչա՛փ զոհեր տուին և որչա՛փ արիւն թափեցին քեզ համար : Թէ լուծուիս՝ Պուլկարիոյ արեան գին աղատութիւն կը խոստանաս. այլ կը մոռնաս ու բնաւ չես յիշեր Հայոց անպարտ արիւն և իւր տուած անհուն զոհեր :

Ո՛վ Երկնից արդարութիւն, մարդկանց փրկութիւն ընդունայն է. սուրդ երկայնմտութեան պատենէն հա՛ն,

Digitized by Google

դու միանդամ հա՛ր և լուծէ՛ այս յաւիտենական հանդուրցը, որ աշխարհիս վերայ դայթագղութիւն մի դարձեր է. վա՛յ նոցա՝ որոց ձեռքով այս աշխարհաքանդ դայթագղութիւն կու գայ։

Դու կը տեսնաս, երբ դահեր կռիւ ուզեն՝ Արեւելեան խնդիր կը յուզեն՝ և երբ աշխարհակալել կամին՝ դարձեալ Արեւելեան խնդիր կը հանեն։ Մինչեւ յե՞րբ դահեր թողուն մարդկութեան վայելուչ խօսք, խորհուրդ և ուխտ, սրով և արիւնով խօսին. մինչեւ յե՞րբ զօրաւորներ կռուին՝ տկար և անզօր ազգեր ոտքի տակ ճըմլուին, պատերազմի արշաւանքներու առաջ խեղճ ժողովուրդ աշխարհաքանդ ու տնաքանդ լինի։

Ներեալ, տառապեալ, զրկեալ, հարստահարեալ, կոտորեալ, վարատեալ, չքաւորեալ և յուսահատեալ ժողովուրդ՝ ճնշող երկաթին տակ կը հեծէ, կ'աղաղակէ և կ'օրհնէ քո անուն, ո՛վ Տէր, տո՛ւր մեզ քո մշտնջենաւոր խաղաղութիւն։

Ասա՛ թող հանդարտին խռովեալ ծովեր. ասա՛ թող կորին կրուրի թնդանօթի ձայներ. ասա՛ դահերուն թող սուրերն 'ի պատեան դնեն։ Ես գիտեմ, նոքա ո՛չ կը կարդան և ո՛չ քո բան 'ի միտ կ'առնուն, թէ «Որ սուր առնու, սրով անկանիցի։»

Տէ՛ր, դու գիտէիր կանխաւ, որ աշխարհ և դահերն զմեզ կը չարչարեն. սորա համար ասացիր որ աղօթենք և միայն քո արքայութիւն խնդրենք։ Մարդիկ անգիտանալով՝ Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ կը խնդրեն։

Այլ քո ճշմարիտ հաւատացեալներ այէտք է յամենայն ժամ այս խնդրեն. Եկեսցէ արքայութիւն քո, որ է ճշմարիտ խաղաղութիւն, սէր և հաւասար եղբայրսիրութիւն, և քո բարի կամքն այն է որ մարդիկ այս պայմանով ապրին աշխարհիս վերայ։

ՎԵՐՋ

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

UNIVERSITY OF MICHIGAN
3 9015 04145 5885

Digitized by Google

39

Digitized by Google